ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 546-Ա	*Տեսակը*	Ինկորպորացիա
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	Չի հրապարակվել	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ընդունման ամսաթիվը*	08.05.2020
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	08.05.2020
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	09.05.2020	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 մայիսի 2020 թվականի N 546-Ա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 16-րդ մասով՝

1. «Թեղուտ Մայնինգ» ՓԲ ընկերության պղնձամբարի պատվարի կայունության վերաբերյալ «Գեոտեխմին» ընկերության հետազոտության զեկույցի ուսումնասիրության նպատակով ստեղծել աշխատանքային խումբ (այսուհետ՝ աշխատանքային խումբ) և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝

1) կազմակերպել աշխատանքային խմբի աշխատանքները.

2) երկշաբաթյա պարբերականությամբ ներկայացնել հաշվետվություն կատարված աշխատանքների մասին:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ն. Փաշինյան

2020 թ. մայիսի 8
Երևան

Հավելված
ՀՀ վարչապետի 2020 թ-ի
մայիսի 8-ի N 546-Ա որոշման

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

«ԹԵՂՈՒՏ ՄԱՅՆԻՆԳ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊՈՂԱՄԲԱՐԻ ՊԱՏՎԱՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ «ԳԵՈՏԵԽՄԻՆ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Գ. Շախբազյան	- ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավար (աշխատանքային խմբի ղեկավար)
Ս. Պետրոսյան	- ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության վարչության պետ
Մ. Մուրադյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի շրջակա միջավայրի և տեխնիկական անվտանգության ոլորտների համակարգման և մեթոդաբանության վարչության գլխավոր մասնագետի պաշտոնակատար
Ա. Ավագյան	- ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ընդերքի և հողերի պահպանության քաղաքականության վարչության ընդերքի պահպանության քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ
Ս. Մարգարյան	- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար (համաձայնությամբ)
Կ. Կարապետյան	- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի նվազեցման վարչության տեխնածին վթարների բաժնի պետ, փ/ծ գնդապետ
Ս. Աբրահամյան	- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչության պետ
Գ. Թորոսյան	- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչության ընդերքօգտագործման ոլորտի քաղաքականության մշակման բաժնի գլխավոր մասնագետ
Ռ. Անդրեասյան	- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲ ընկերության ջրամբարների պատասխանատու (համաձայնությամբ)
Ա. Հովսեփյան	- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի շինարարության և գիտատեխնիկական նորմավորման վարչության գիտատեխնիկական քաղաքականության բաժնի պետ
Ա. Բարսեղյան	- ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ընդերքի վերահսկողության վարչության ընդերքի շահագործման վերահսկողության բաժնի ավագ պետական տեսուչ

Ա. Անտոնյան	- ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ընդերքի վերահսկողության վարչության ընդերքի շահագործման վերահսկողության բաժնի ավագ պետական տեսուչ
Հ. Փալանջյան	- «ՀայՀիդրոԷներգաՆախագիծ» ՓԲ ընկերության տեխնիկական տնօրեն, հիդրոտեխնիկ (համաձայնությամբ)
Ս. Զումայան	- «ՀայՀիդրոԷներգաՆախագիծ» ՓԲ ընկերության գլխավոր հիդրոերկրաբան (համաձայնությամբ)
Գ. Գաբրիելյան	- «ՀայՀիդրոԷներգաՆախագիծ» ՓԲ ընկերության հիդրոտեխնիկ (համաձայնությամբ)
Հ. Մկրտչյան	- «ՀայՀիդրոԷներգաՆախագիծ» ՓԲ ընկերության հիդրոերկրաբան (համաձայնությամբ)

(հավելվածը լրաց. 27.05.20 N 636-Ա, փոփ. 15.06.20 N 669-Ա)

Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավար

Է. Աղաջանյան